

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ծրկանի համալսարանի հրատարակչություն, 1983, 336 էջ

Հայ ֆերականագիտությունն ունի բազմադարյան պատմություն. այն սկսվել է գրերի գյուտից անմիջապես հետո և հայ մշակույթի զարգացման պատմության մեջ միշտ նշանակալի տեղ է գրավել: Դ. Քրակացու «Քրեանստ ֆերականություններից հետո գրվել են ոչ միայն մեկնողական բնույթի (հունատիպ, լատինատիպ) ֆերականական աշխատություններ, այլև հայոց լեզվի զանազան օրինաչափությունները ներկայացնող և ճորովի մեկնաբանող ինֆուռուայն բազմաթիվ աշխատանքներ թե՛ հայ և թե՛ օտարազգի գիտնականների կողմից: Այնուամենայնիվ ձևաբանության և շարահյուսության մեջ փչ շեն այնպիսի կենտոտ հարցեր, խնդիրներ, որոնք դեռևս կարիք ունեն լուստարանման: Սկսած աշխարհաբարի առաջին ֆերականներից դրանք ֆննության առարկա են, ուսումնասիրվում են՝ հաճախ դառնալով տաֆ, կրճոտ վիճարանությունների նյութ (խոսքի մասերի որոշման նիմունքներ, հոլովման, խոնարհման հարցեր և այլն): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ հայերենի օրինաչափությունները նկարագրվել և դարեր շարունակ ներկայացվել են օտար՝ մերթ հունական (V—XVI դդ.), մերթ լատինական (XVII—XVIII դդ.) ֆերականությունների ազդեցությամբ, և ինֆուռուայն ֆերականական աշխատություններ սկսել են գրվել XVIII դարի վերջին ֆառորդից միայն, ապա պարզ կլինի, որ հայերենի ֆերականության պատմությունը նախ օտար ազդեցություններից ազատվելու և ապա սեֆական իրողությունները իսկապես, ճշգրտորեն ներկայացնելու համար մղված պայքարի պատմություն է: Եվ ֆանի որ հայտնի է ընդհանրապես ավանդույթի ուժը ամեն մի հարցի վերաբերյալ, ապա նաև պարզ է, թե որքան ղովար է հարցերը ճորովի ներկայացնելու յուրաֆանչյուր փորձ: Պետք է նշել, որ թեև կրճերը սովորաբար բորբոքվել են ձևաբանությանը վերաբերող հարցերը ֆննելիս, սակայն վիճելի հարցերը փչ շեն նաև շարահյուսության մեջ: Պարզապես վերջինս համեմատաբար ավելի փչ է ֆննված ժամանակակից լեզվաբանների կողմից: Ահա թե ինչու շարահյուսությանը վերաբերող յուրաֆան-

չյուր խնդրի ուսումնասիրության և ֆննության ողջունելի է և մասնագետ ընթերցողների կողմից ընդունվում է հետաքրքրությամբ:

Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիանի դոցենտ Հ. Հարությունյանի «Կառավարումը ժամանակակից հայերենում» մեկնաբանությունը նման աշխատանքներից է, որ հեղինակն անդրադարձել է շարահյուսության մեջ բավականաչափ վեների ու տարակարծությունների տեղիք տված այնպիսի հարցի, ինչպիսին նախադասության անդամների կապակցության եղանակներից մեկի՝ խնդրատության կամ հոլովառության, կամ իր տերմինով ասած՝ կառավարման ֆննությունը է:

Ինչպես արդեն վերևագրից էլ երևում է, Հ. Հարությունյանն ուսումնասիրության նյութին մատեցել է հենց խնդրա առարկա երևույթի անվանումից: Կապակցության այս եղանակի ուսումնասիրությունը, ինչպես հեղինակն է նկատում աշխատության նախաբանում, բավական բարդ է այն պատճառով, որ նրա ֆննությունը չի սահմանաֆակվում լեզվական մեկ, այն է՝ շարահյուսական մակարդակով, այլև որոշակիորեն կապվում է նաև բառական, ձևաբանական մակարդակների հետ: Այս երեքի կապի մեջ էլ կատարում է հեղինակն իր ֆննությունը:

Հայտնի է, որ լեզվի կառուցվածքի ֆննությունն սկզբնապես ուներ մեկ նպատակ. լեզվական օրենքները պետք է օգնելին ֆիլիսոֆայական հին բնագրերը ճիշտ և նշտ հասկանալուն, ուստի նրանք (լեզվական օրենքները) հենց ֆիլիսոֆայության մեջ էլ ներկայացվում էին: Հետագայում, հիշտ է, լեզվի ուսումնասիրությունը դարձավ գիտության առանձին նյութ, սակայն երկար ժամանակ ձևաբանության և շարահյուսության հարցերը ներկայացվում էին միմյանցից շտարբերակված: Հայ ֆերականագիտությունն էլ որդեգրեց այս սկզբունքը, և բավական երկար ժամանակ պահանջվեց այդ երկու բաժինները միմյանցից առանձնացնելու համար: Ահա թե ինչու ցանկացած հարցի ֆննությամբ զբաղող յուրաֆանչյուր լեզվաբան անզայման պետք է անդրադառնա տվյալ հարցի ուսումնասիրության պատմությանը:

2. Հորսրթյունյանը ևս կառավարման բնության սկսում է հարցի պատմութիւնից՝ բավական տեղ հատկացնելով և աշխատութեան մասը զլուխներում էլ ըստ անհրաժեշտութեան հաճախ անդրադառնալով դրան: Նախադասութեան անդամների կապակցութեան հարցերը բնած լեզվարաններից հեղինակն ուշադրութեան է դարձնում անուններն ապա քանակը, ուր, ուր արդար առաջապահներն իրենց խոսքն են ասել այդ հարցի վերաբերելով: Բավական մանրամասն շարադրում է նրանց հայացքները՝ երբեմն էլ դրսևերելով իր վերաբերմունքը, հատկապես այն դեպքում, երբ ընդունելի է համարում արտահայտված կարծիքը: Այդ բանն անում է սեղմ, մեկ երկու բառով: Առնաստիճակ ամբողջ աշխատութեան լեզուն այդպիսին է: Հեղինակը չի սիրում երկարաբանել: Հանգամանքից օգտվելով ասենք, որ աշխատութեանը գրված է լեզվական բարձր մակարդակով:

Տերմինի հարցը բնեկիս հեղինակը բավական համոզիչ բացատրում է, թե ինչու է հարմար կառավարում անվանումը: Հայտնի է, որ *հոլովառութիւն*, *խնդրառութիւն* ավանդական պատմական տերմիններն այժմ պայմանական են այն պատճառով, որ արդեն առաջապահներն ճշգրտվել են փրակական, այս դեպքում շարանյութական, շատ հասկացողութիւններ: Այսպէս, *խնդիր* անվան տակ նախկինում ըմբռնվում էին նաև պարագաները, և *խնդրառութիւն* տերմինն արդարացնում էր իրեն, իսկ այժմ այդ անվանումն արտահայտում է միայն երևույթի մեկ մասը: Նույնը և *հոլովառութիւն* տերմինը: Փառնի որ հայերենում հոլովական գտնաբան հարաբերութիւններն արտահայտվում են կապերի և կապակցութեան բաների միջոցով, ուստի այս տերմինը ևս թերի է: Նրանք անվանումներից 2. Հորսրթյունյանն ընդունելի է համարում կառավարութիւն և վարում տերմինները, բայց ի նկատի ունենալով, որ առաջինն իբրև բառ շատ է գործածվում և համարժեք է *правительство* բառին, մերժում է այն: Նախընտրելի համարելով *Մ. Արեղյանի* կողմից գործածած *վարում* տերմինը՝ մեծագրութեան հեղինակը գտնում է, որ ավելի հարմար է կառավարում տերմինը, որ վերջինս իր իմաստով և կազմութեամբ համապատասխանում է ռուսերենում գործածական *управление* տերմինին, նույնամաստ է որոշ լատինաբան փրակականների և Գ. Զահուկյանի գործածած *կառավարութիւն* տերմինին, լինովին արտահայտում է անվանվող հասկացութեան իմաստը, էությունը, բանի որ, իսկապէս, «խնդրառում» կամ «հոլովառում» բառն ստորագրաբան կառավարում է, թիպարում, որ գործածվի այս կամ այն փրակականի ձևով: Նվ վերջապէս կառավարումն իրակ գիտական տերմին է, որ ընդունված է գիտութեան շատ այլ նշաններում և նշանակում է տարբեր համակարգերի կազմա-

կերպման եղանակ, որն ապահովում է նրանց կառուցվածքային ամբողջականութեանը» (էջ (28—29):

Այսպիսով, բառերի ստորագրաբան կապակցութեան եղանակն ընդհանուր տերմինով կոչելով կառավարում՝ Հորսրթյունյանն այն բնում է լեզվական կառուցի երկու կողմերով՝ ձևի և բովանդակութեան: Ըստ փրակականի ձևավորման կառավարումն արտահայտվում է իբրև հոլովառութիւն՝ կապառութիւն, ըստ շարանյութական կառուցի բազադիչների միջև առկա իմաստային հարաբերութեան բնույթի՝ *հեթակառութիւն*, *ստորագրութիւն* (մարդ կոչել, ուսանող դառնալ), *խնդրառութիւն* (ուսել հաց, մտնենալ սեղանին), *պարագառութիւն* (ապրել Երևանում): Ընդ որում նշում է, որ ենթակառութիւնն ու ստորագրութիւնն արտահայտվում են միայն իբրև հոլովառութիւն, խնդրառութիւնը՝ սովորաբար իբրև հոլովառութիւն, երբեմն նաև հոլովակապառութիւն, պարագառութիւնը՝ իբրև և՛ հոլովառութիւն, և՛ հոլովակապառութիւն: Ըստ սրա էլ տրվում է կառավարման գծապատկերը:

Աշխատութեան երկրորդ և երրորդ մասերը բուն էությունն են, որ շարադրվում են կառավարման հիմունքները, ընդգրկման առնամանակն ու կառավարման արտահայտութիւնը: Այստեղ ևս լեզվարանն անդրադառնում է յուրաքանչյուր հարցի մասին եղած կարծիքներին, նշում դրանց միջև եղած ընդհանրութիւնները, տարակարծութիւնները, տարբերակները: Վերջիններս վերաբերյալ բացատրութիւններ տալիս հաճախ շարադրել է նաև իր հայացքները:

Հեղինակը մանրամասն բացատրում է, թե ինչ նյակներով է մտնում հարցի բնութեանը, հայտնի տարբեր մտնումներին ո՞րը (կամ որո՞նք) է ընտրում և ինչու:

Պարզվում է, որ կառավարումը բնեկիս Հորսրթյունյանն իբրև վերլուծութեան վերջին առնամանակ վերցնում է շարանյութական նկատարումը միավոր:

Տալով կառավարման ստորաբաժանումներ՝ բայական, անվանական, կապային, մանրամասն բնում է յուրաքանչյուրը: Այսպէս, բայական կառավարումը բնում է ըստ սերտ, սկզբնականի և սերված, ոչ-սկզբնականի բայերի, օրանցից յուրաքանչյուրն էլ դասագրութիւն ըստ առանձին տեսակների: Նույն կերպ է վարվում նաև անվանական, կապային կառավարման տեսակները բնեկիս: Բավական համոզիչ ձևով ցույց է տալիս կառավարման յուրաքանչյուր տեսակի, ենթատեսակի առանձնահատկութիւնները: Կառավարման արտահայտութիւնը ներկայացնելով բառ խոսքի մասային պատկանելութեան՝ հեղինակը հարկ է համարում նշել, որ դա շարանյութական երևույթ ձևարանական հիմունքով բնեկ չէ, որովհետև գտնում է, որ «լեզվական

ավելի բարձր մակարդակի միավորի համար ստորին մակարդակի միավորները կառուցված-
ֆային տարրեր են և, հետևաբար, բարձր մա-
կարդակի միավորը վերլուծելիս հասնում ենք
նախորդ մակարդակի միավորներին, որոնցով
պայմանավորվում է առաջինի կառուցվածք»
(էջ 108):

Բայական կառավարումն ըստ սեռերի բնե-
լիս աշխատությունում հատկապես նշվում է,
թե յուրաքանչյուր սեռ ինչ առանձնահատկու-
թյան ունի, որովհետև հենց դրանով է պայմա-
նավորված տվյալ բայի (և բայատեսակի) կա-
ռավարումը: Այս պատճառով էլ ներգործականի
սեռի բայերի կառավարումը խմբավորվում է
ըստ արժույթների (ֆանի որ այս սեռը բազ-
մարժույթ է), իսկ որովհետև չեզոք սեռը միար-
ժույթ է, նրա կառավարումը իրավում է ըստ այս
բայերի ներխուժմասային իմաստով պայմա-
նավորված ոչ ընդհանուր լրացման արտահայ-
տության՝ հույզական և հույզակապային (չեզոք
սեռ+տրական, չեզոք սեռ+բացառական): Նաև
լավ կլինե՞ր, եթե հեղինակը բացառականի հետ
կապակցվող բայերի մի մասն առանձնացներ
ըստ այն բանի, որ նրանք ներխուժմասային
իմաստով տարբեր կառավարում կարող են ու-
նենալ (կամ՝ չունենալ): Տե՛ղ չէ՝ վշտանալ,
ձանձրանալ, վախենալ, հոգեհլ մի բանից, բայց
նաև առնասարակ ձանձրանալ, վշտանալ և այլն,
երբ լրացում չի պահանջում, և բայը սուկ առ-
ձեռագրում է երևույթը: Այսպիսի իմաստային
բաժանում կարելի է կատարել նաև բնածայնա-
կան բայերի մեջ և ըստ այդմ էլ խոսել նրանց
կառավարման մասին. սվավալ, խշխշալ, դղըր-
դալ մի բանից և՛ ընդհանրապես սվավալ, խըշ-
խըշալ և այլն (Տերևները խշխշում են: Տերևները
սվավում են): Այս մասին խոսել անհրաժեշտ է,
մանավանդ որ բայական կառավարումը շատ
մանրամասն է բնավում, և հեղինակն էլ գտնում
է, որ բայերի կառավարման բնությունն ամ-
բողջական կլինի միայն այն դեպքում, երբ
հաշվի են առնվում կառավարման տարբերու-
թյունները, ֆանի որ բավական սովոր թիվ են կազ-
մում այն բայերը, որոնք առնում են տարբեր
ձևավորում ունեցող լրացումներ և արտահայ-
տում են իմաստային նույն կամ գրեթե նույն
հարաբերությունը: Եվ ֆանի որ նման բայերն ու-
րիշ որևէ ընդհանրությամբ խմբավորել հնարա-
վոր չէ, ուստի դրանք պետք է բնեյ առտե՞նք:
Բայական կառավարումը բնեյիս Հարություն-
յանը հաշվի է առնում նաև բայակազմությունը.
կան այնպիսի բարդ բայեր, որոնց վերջին բա-
յակոն բազադրիչն առանձին վերցրած ինքնու-
րայն կառավարող բայ է, իսկ մյուս՝ նախա-
գաս անվանական բազադրիչն այդ բայի խըն-
դիրն է, այսինքն՝ բազադրիչների շարահյուսա-
կան կապը մթազնած չէ, և բազադրությունը չա-
րահյուստե՞ն վերլուծելի է: Եվ ֆանի որ բայ-

բառն իր ներսում ունի իր խնդիրը, ուստի ամ-
բողջ բազադրությունը սովորաբար գրկվում է
այդ իմաստով խնդիր առնելու հատկությունից,
բայց բայը պահպանում է այլ խնդիրներ առնե-
լու հատկությունը: Սրինակ՝ արծաթազօծել բայի
օծել բազադրիչն առանձին վերցրած պահան-
ջում է ուղղակիանով և գործիականով ոչ ընդհա-
նուր լրացումներ. բաժակն արծաթով օծել սևը-
ծաթազօծել բայի մեջ արծաթ բազադրիչն առ-
տանայտում է գործիական հույզի իմաստ, և այդ
պատճառով արծաթազօծել բայն այլևս այդ ի-
մաստով գործիականով լրացում չի առնում՝
բաժակն արծաթազօծել» (113): Նույն կերպ և
դասարարվում են մնացած բարդ բայերը՝ ուշա-
դրություն դարձնելով այն բանի վրա, որ խո-
սել և շարախոսել և նման կազմություն ունեցող
բայերը տարբեր կառավարում ունեն: Միաժա-
մանակ նշվում է, որ կան նաև նման կազմու-
թյուն ունեցող այնպիսի բայեր, որոնք կառա-
վարման էական տարբերություններ չունեն (ձգել
և երկարաձգել, գրել և գաղտնագրել և այլն):

Լավ է կատարված ներգործական բայերի կա-
ռավարման բնությունը: Ինչպես արդեն տեսի
ենք, այստեղ բայերի կառավարումը բնավում է
ըստ արժույթների (միարժույթ, երկարժույթ, եռ-
արժույթ...): Հեղինակը ցույց է տալիս, որ հա-
յերենում կան նաև ներգործական այնպիսի բա-
յեր (հատկապես շարժման իմաստ ունեցող), ո-
րոնց կառավարման տիրույթը կտրող է հասնել
վեց անգամի՝ մեկ գերադաս բայ և հինգ ստա-
րադաս անդամներ՝ տարատիպ ստորադասու-
թյամբ, միաժամանակ չի մոռնում նաև նշել,
որ նման կազապարը այնքան էլ գործուն չէ:

Բայական լրացումները բաժանելով երկու
խմբի՝ ընդհանուր (այսինքն լրացումներ, որոնք
հատուկ են, ընդհանուր են համարյա բոլոր բա-
յերի համար) և հասարակ, ոչ-ընդհանուր (որ
ընդունում են որոշակի բայեր)՝ Հարությունյանը
աղյուսակների միջոցով, հավաքած փաստերով
ձգտում է պարզել, թե որ լրացումներն են բնա-
րոշ բայերին: Հաշվումները ցույց են տալիս, որ
ընդհանուր կամ հասարակ լրացումներ են հիմ-
նականում պարագաները, որ հայերենում չկա
այնպիսի բայ, որն այս կամ այն հույզով առ-
տանայտվող որևէ լրացում չպահանջի: Այստեղ
ուշագրություն է դարձվում նաև լրացում դար-
ձող խոսքի մասին և հատկապես նշվում, որ ոչ
բոլոր գոյականներն են, իրենց բառակա՞ն իմաս-
տի պատճառով, դառնում լրացում: Եվ հենց այս
հանգամանակ էլ ստեղծե՞նք փակում և մոցում.
ժամանակի պարագան բոլոր հույզներով արտա-
հայտվում է, բայց ոչ բոլոր գոյականներն են
ժամանակի պարագա դառնում (նույնիսկ ժամա-
նակի իմաստ արտահայտող ոչ բոլոր գոյական-
ները) և այլն:

Անվանական, կապային կառավարումները ևս
բնեյիս հեղինակն առնում է նուրբ դիտողություն-

ներ, բերված փաստերի օգնությամբ՝ համոզիչ եզրահանգումներ: Կառավարման յուրաքանչյուր տեսակը բնեկիս հեղինակն իր ձեռքի տակ ունի քավականաչափ հարուստ նյութ: Օրինակները բերում է և՛ դասական, և՛ ժամանակակից գեղարվեստական գրականությունից: Քիչ չեն նաև գիտական գրականությունից բերված օրինակները: Առհասարակ զգացվում է, որ հեղինակը շատ է պրպտել, երկար է զբաղվել ուսումնասիրվող հարցով, լավ ծանոթ է նյութին առնչվող գրականությանը, տեղին զննատուում է այն, օգտվում նրանից և միաժամանակ հիմնականում համոզիչ բացատրում, թե ավյալ կարծիքին ինչու է համամիտ և ինչու ոչ:

Փակի որ, ինչպես արդեն նշել ենք, աշխատությունում բնկվում են այնպիսի հարցեր, որոնք վիճելի են և քաղմաթիվ տարակարծությունների արիք են տվել ու տալիս են, ուստի հնարավոր չէ սպասել, որ այս աշխատությունում դրանք իսպառ լուծված լինեն. մանավանդ որ հեղինակը հաճախ որոշ վիճելի խնդիրներ առաջ էառնչելով նշում է նրանց կարևորությունը, ինչ-որ չափով բնկում է դրանք ոչ լրիվ և հայտարարում, թե հետո այս հարցին նորից է ազդողադառնալու: Այսպես է վարվում շատ անգամներ, և պիտի սասել, որ երբև՛ս մտածում է այդ անել, իսկ երբև՛ս էլ անդրադառնալիս ոչ այն առումով է բնկում:

Հատկապես վիճելի է վերացական բայերով և անորոշ դերբայով արտահայտված կոռուպցիոնի բնությունը: Ստորագիծն որպես առանձին շարժանյառույթ ընթանող լեզվաբանների կարծիքները հակիրճ շարադրելով՝ հեղինակը բերում է նաև իր փաստարկները: Նա գում է. «Ստորագառու բայերը կարող են գործածվել նաև ոչ դիմավոր ձևով և նորից ունենալ լրացում. *յսիկ հմ նրա ուսուցիչ դառնալը, նրան բարեբար հրաշակելը բոլորին կարմաքրեց, առաջավոր համարվածն ընտրվեց պատգամավոր և այլն*» (183): Կարծում ենք, որ այդպես չէ: Որ ուսանող դառնալը, բարեբար համարվելը մեկ անգամ են, վկայում է այն, որ նրա, նրան բառերը ոչ ուսանող բառի լրացումն են առանձին վերցրած և ոչ էլ *դառնալը, համարվելը* բառերին: Այսպես, չի լինի. *յսիկ հմ նրա դառնալը, կամ նրան հռչակելը բոլորին կարմաքրեց*. Երանք կամ միտք չեն արտահայտում, կամ էլ այն միտքը չեն արտահայտում, ինչ առաջին ձևերում: Այնինչ սովորական, ոչ վերացական բայերը երկու ձևով էլ գործածվում են. *յսիկ հմ նրա դաս պատասխանելը* և՛ *յսիկ հմ նրա պատասխանելը* և այլն: Վիճարկելի է նաև մյուս գործառնարանությունը, որ ստորագիծն բայ ստորագայից անկախ կարող է ունենալ անվաճեան լրացումներ: Օրինակ է բերվում *լավ արակերտ է, համայնարանի ուսանող դարձավ* և այլն: Թայց չէ՞ որ նույն կառույցները կարող

են ընդունել նաև բայական լրացումներ. *նա միշտ աշակերտ է, այս տարի ուսանող դարձավ*, բայց *հանգամանքներում* բարի է, *նա ամենուրեք բժիշկ է և այլն*: Մի՞թե ընդգծված պարագաները վերաբերում են միայն օժանդակ բային կամ վերացական բային: Մի՞թե երբ ասում ենք *նա միշտ է*, դրանով իրականություն որևէ հարողում ենք կատարում, չէ՞ որ երբ աշակերտ և մյուս բառերը լրացում են, ապա նախադասությունն առանց այդ բառերի էլ պետք է միտք արտահայտի: Կամ մի՞թե հավասարազոր են *նա ամենուրեք բժիշկ է* և՛ *նա ամենուրեք է*: Այլ փաստարկներ ևս կարելի է բերել (հարողոր բայերի անվանական լրացում առնելը և այլն), որը, սակայն, այս պարագաներում հարմար չէ, քանի որ կշեղեր մեզ մեր բուն նպատակից. դա մի առանձին հարվածի նյութ է:

Վիճելի են նաև անորոշ դերբայ-եղանակալի ձև կառույցը բայական բազադրյալ ստորոգյալ համարելու դեմ բերված փաստարկները: Մենք համամիտ ենք ռուս ֆրեզականագիտության մեջ արտահայտված այն կարծիքին (որն ընդունում են նաև շատ հայ լեզվաբաններ), որ երբ եղանակավորիչ բայը և դերբայը միևնույն են-բազայի գործողությունն են, իսկ երբ, բայական բազադրյալ ստորոգյալ են, իսկ նրան, ապա անորոշ դերբայը լրացում է (ուղիղ խնդիր կամ մեկ այլ անդամ): Այսպես՝ *նա սկսեց գրել*— ընդգծվածը բայական բազադրյալ ստորոգյալ է, իսկ՝ *նա հրամայեց գրել*— ընդգծվածն ուղիղ խնդիր է: Առհասարակ լեզվաբանության մեջ այդ պատճառով էլ տարբերակվում են ենթաբայի և խնդրի անորոշներ, օբյեկտի ինֆինիտիվ (*объектив*'s infinitive) և սուբյեկտի ինֆինիտիվ (*субъектив*'s infinitive):

Նշելով, որ բայանուններն ավելի շատ հալվականապային լրացումներ են առնում, Հարությունյանը դրա պատճառը համարում է այն, որ բայանուն գոյականների մեծ մասը հայերենում ներակազմություններ են, և որ այստեղ որոշակի դեր է կատարում ռուսերենի ազդեցությունը ոչ միայն բայանուն գոյականների ստեղծման, այլև կառավարման, լրացումներ առնելու ճարտար. ինչպես՝ *շարժում ընդդեմ պատերազմի, донжение против воиан*, համալրանք մեկի նկատմամբ— *симпатия к кому-нибудь*» (243) և այլն: Երևի զգալով, որ ասածն այն չէ, հեղինակը ծանոթագրությունում նշում է, որ գրաբարում բայանուններ նույնպես եղել են, ինչպես այստեղ այդ բառերի ավելի լայն գործառնարան, բառակազմական երևույթի ակտիվացման մասին է, որ կապվում է հասարակական-բազադրական անցուղաբանի, նոր հասկացությունների առաջացման, բառիմաստի փոփոխության հետ» (նույն տեղում): Իհարկե, այսպես չէ: Գրաբարում բայանունները և՛ շատ-շատ էին, և՛ մեծ ակտիվությամբ լրացումներ էին առնում՝ շատ

անգամ փոխարինելով բայերին: Եվ պետք է նշել, որ մեր հին լեզվում բայաճյուղների համար նույնքան սովորական էր նախդիրներով և նախադրություններով լրացումներ անել, որքան առանց դրանց: Այնպես որ այստեղ օտար ազդեցության մասին խոսք չի եղել չի կարող: Գրաբարից է գալիս նաև նույն արմատից կազմված բայն և բայանվան՝ տարբեր հոլովներով խնդիր անելով (բամբակենու ծերատում, ծերատել բամբակենին) և այլն: Այս կապակցությամբ նշե՞մք նաև, որ աշխատությունում բերի է բազմաբայությամբ բայանուն գոյականների հոլովառության ցանկը:

Հեղինակի կազմած ցանկերը, որ—+ներով առատաքանությամբ են այս կամ այն ձևով լրա-

ցումներ անելը կամ չառնելը, միշտ չէ, որ նիշտ են: Ինչպես աշխատությունում է առանձնապես նշվում, կառավարման համար նշանակություն ունի կառավարող բառի բազմաբայությունն ու իմաստների փոփոխությունը, ուրեմն—+ները նշանակելիս այս հանգամանքն անպայման պետք էր նաշվի առնել:

Այլ բերություններ ևս կարելի է նշել, սակայն բավարարվեն այստեղով և նորից ասենք, որ Հ. Հարությունյանի «Կառավարումը ժամանակակից հայերենում» մեծագրությունը հետաքրքիր աշխատանք է և լուրջ ներդրում շահագործության ուսումնասիրության բնագավառում:

Է. ՄԿՐՏՁՅԱՆ

Ժ. ՔԱՆԱԹԱՐՅԱՆ, Գրական ֆենադատության տեսության և պատմության հարցեր, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1983, 240 էջ

Վերջին երեք տասնամյակում հայ գրականագիտական և ֆենադատական միտքը հասավ ափնենայտ նվաճումների: 50-ականի սկզբներից սկսված քննադատական շարժումը ստեղծեց անհրաժեշտ ավանդույթներ, ստեղծագործական իմաստով կենսական մթնոլորտ: Հայտնի էրիս տասնամյակներում ավագներին միացան նաև նուրբագույները, որոնք լայնացրին հին ու նոր արժեքների գնահատման հնարավորությունների տեսողաշարը: Հայ ֆենադատն ու գրականագետը մեր գեղագիտական, տեսական մտքի հեղինակությունը մեծացնելով դուրս եկան միջազգային ճանապարհ: Սա, ինչ խոսք, պատվարի է և, անշուշտ, ուրախալի է, որ այս արգասավոր շարժմանը իրենց հանդես են բերում համեմատաբար երիտասարդները:

Նորերից Ժ. Փայնթարյանը, որը վերջին մեկուկես տասնամյակում հաղթես էր եկել տասնյակ հոգավածներով՝ նվիրված արդի հայ արձակի, պոեզիայի և հին ու նոր ֆենադատության մի շարք էական պարզմաններին, կուտակել ուրախ փորձ, նախնա է եկել իր տեսակի մեջ մի ինքնատիպ ուսումնասիրության՝ «Գրական ֆենադատության պատմության և տեսության հարցեր»: Առում ենք՝ ինքնատիպ, քանի որ նման բնույթի աշխատանքները նախորդում է մեզանում: Անհանկուտ բոլոր չքով. և՛ ուսու, և՛ հայ, և՛ Միության ուրիշ ազգերի տեսաբանները բազմաթիվ հոգավածներ են գրել ֆենադատության դերի, նրա գրական տեղի, միտումների ու հարակից հարցերի մասին, բայց առանձին մեծագրություն ստեղծվածներում վերահիշյալ հարցերը չեն ֆենադատության:

Գիրքն այս իմաստով առաջնիկ է և իր բովանդակությամբ բավականին հարուստ է ու տարազան: Այստեղ գիտական լրջմտությամբ ֆենադատ են տարատեսակ հարցեր: Ամեն դեպ-

ում հեղինակը իր հետազոտությունն սկսում է սովորական հարցադրման պատմությունից, որից առնում է էական, ողջամիտ փաստեր, արժեքավորում դրանք, ստեղծում գիտականորեն համոզիչ եզրակացությունների շղթաներ: Շատ էական է այս իմաստով ֆենադատության գիտական իմաստի և դրա պատմականության ըմբռնումը: Վկայակոչելով հունական, եվրոպական, ռուսական և մեր գեղարվեստական-գեղագիտական մտքի մի շարք պրոբլեմատիկ փաստեր՝ գրականագետը «մեռյալ» քվեարկելով նույնիսկ անում է հետևյալ եզրակացությունը. «Ֆենադատության զարգացման նախնական շրջանում գրականությունն իր մեջ ներառում էր ֆենադատությունը, բայց հետո գրականությունը դասնա-կամայ ցատկով ֆենադատության տարրերից, դարձավ վերջինիս հետազոտության առարկան»: Մեր և ուրիշների դարերի փորձը հենց սա է ճշատա-

տում: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ գլխավոր հարցին դառնալուց կամ դա նախապատրաստելուց առաջ, Փայնթարյանը ֆենադատության՝ որպես ինքնուրույն գիտության, իրականի և պատկեր է պայտալանում: Ապա, դառնալով վերջին՝ 70—80-ական թթ. միութենական մամուլում ծավալված բանավեճերին, որի անհամապի ընթացի դեմ նախորդ գլխում արդեն իսկ հայտնել էր իր անբավականությունը, հեղինակը անհրաժեշտ բանիմացությամբ ֆենում է քննադատությունը գրականության հարցը, մի պարզեմ, որի շուրջը մինչև օրս էլ լուրջ վեճ է գնում:

Հարցի մեկնության մեջ թերևս ավելի մոլորանողը Բուրսովն է, որը ֆենադատությունն անվերապահորեն մտցնում է գեղագիտականության ոլորտը և չի ուզում ընդունել ոչ մի ա-